IIA Armenia	**Որակավորման ծրագրի և կրթության կոմիտեի աշխատակարգ**	Խմբագրություն 1 Ուժի մեջ է 01.03.2024թ.-ից

Նպատակը

Որակավորման ծրագրի և կրթության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նպատակն է աջակցել ՆԱԻ-Հայաստանի անդամների մասնագիտական գիտելիքների ու ունակությունների զարգացմանը՝ կազմակերպելով համապատասխան վերապատրաստումներ և դասընթացներ, խրախուսելով մասնագիտական որակավորումների ձեռքբերումը և շարունակական կրթությունը:

Պարտականությունները

Կոմիտեի հիմնական պարտականություններն են՝

1. Բացահայտել/գնահատել ՆԱԻ-Հայաստանի անդամների վերապատրաստումների և դասընթացների կարիքները, այդ թվում՝ նաև պարբերական հարցումների միջոցով,
2. Կազմակերպել/համակարգել լավագույն փորձին և միտումներին համահունչ դասընթացներ և վերապատրաստումներ, ըստ անհրաժեշտության ներառյալ նաև՝ մշակել ուսուցման ծրագրեր, ներգրավել բանախոսներ և սեմինարավարներ,
3. Արդյունավետ համագործակցություն ապահովել դասընթացներ և վերապատրաստումներ իրականացնող այլ ընկերությունների հետ (անհրաժեշտության դեպքում),
4. Գնահատել ՆԱԻ-Հայաստանի կողմից իրականացվող վերապատրաստումների ծրագրի արդյունավետությունը և միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դրանց շարունակական բարելավումը,
5. Բարձրացնել ՆԱԻ-Հայաստանի անդամների իրազեկվածության մակարդակը առկա որակավորումների վերաբերյալ, խրախուսել մասնագիտական որակավորումների ձեռքբերումը, տրամադրել տեղեկատվություն որակավորման գործընթացի վերաբերյալ,
6. Աջակցել ՆԱԻ Հայաստանի Խորհրդի և այլ կոմիտեների աշխատանքներին:

Կազմը

Կոմիտեի ընթացիկ կազմը ներկայացված է Հավելված 1-ում:

Կոմիտեի կազմը հաստատում է ՆԱԻ-Հայաստանի Խորհուրդը: Կոմիտեին կարող են անդամակցել ինչպես տվյալ ոլորտում հետաքրքվածություն ունեցող Խորհրդի անդամները, այնպես էլ ՆԱԻ-Հայաստանի այլ անդամներ: Կոմիտեի անդամների քանակի սահմանափակում և նվազագույն պահանջ սահմանված չէ: Կոմիտեի աշխատանքները կազմակերպում, կոորդինացնում և վերահսկում է Կոմիտեի նախագահը, ում նշանակում է Կոմիտեն՝ իր կազմում ներառված Խորհրդի անդամներից:

Կոմիտեի հանդիպումներին և/կամ ընթացիկ աշխատանքներին կարող են մասնակցել նաև ՆԱԻ-Հայաստանի այլ անդամներ և ոչ անդամներ՝ որպես հրավիրյալներ:

Հանդիպումները

Կոմիտեն հանդիպում է կանոնավոր կերպով՝ նվազագույնը եռամսյակը մեկ անգամ, կամ ըստ անհրաժեշտության ավելի հաճախ (այդ թվում նաև՝ հեռակա կարգով)՝ նպատակ ունենալով իրականացնել իր առաջ դրած խնդիրները: Կոմիտեն սահմանում է վերապատրաստումների/դասընթացների տարեկան պլանը, քննարկում իրականացվելիք նախագծերը: Բյուջե պահանջող նախագծերը համաձայնեցվում են Խորհրդի հետ:

Որոշումները

Կոմիտեի որոշումները իրավազոր են, եթե ներկա են (հեռակա նիստերի դեպքում՝ հարցմանը մասնակցել են) Կոմիտեի անդամների մեծամասնությունը: Որոշումները ընդունվում են միաձայն կարգով՝ նիստին ներկա գտնվող (հեռակա նիստերի դեպքում՝ հարցմանը մասնակցած) Կոմիտեի անդամների կողմից:

Յուրաքանչյուր Կոմիտեից հետո հնգօրյա ժամկետում Կոմիտեի նախագահը կազմում է Կոմիտեի որոշումների արձանագրություն, որը շրջանառվում և հնգօրյա ժամկետում համաձայնեցվում է Կոմիտեի նիստին ներկա անդամների, ինչպես նաև պատասխանատու կատարողների հետ: Յուրաքանչյուր հաջորդ Կոմիտեի ընթացքում Կոմիտեի նախագահը Կոմիտեի քննարկմանն է ներկայացնում նախորդ կոմիտեների հանձնառությունների կատարողականը:

Հավելված 1. Որակավորման ծրագրի և կրթության կոմիտեի կազմը

Որակավորման ծրագրի և կրթության **կոմիտեի կազմը** հետևյալն է.

Կոմիտեի նախագահ՝ Սերինե Ֆլջյան

Կոմիտեի անդամ՝ Մարինե Ղուշչյան